

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«-----» ----- 2019թ

N--- - Ն

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՊՈՂՈՏԱՆ ՍՈՒՐԲ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՊՈՂՈՏԱ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի պողոտան անվանակոչել Սուրբ Մեսրոպ Մաշտոցի պողոտա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՍԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից հետո, 1990-ական թվականներից սկսված մայրաքաղաք Երևանում մի շարք փողոցներ և պողոտաներ անվանափոխվեցին ականավոր հայրերի անուններով, որոնցից մեկն է Մաշտոցի պողոտան:

Մերոպ Մաշտոցը եղել է հայկական գրի ստեղծողը, հայագիր դպրոցի հիմնադիրը, ինչպես նաև լուսավորիչ, մշակութային-հասարակական գործիչ, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու վարդապետ, ում պատմական առաքելությունը կարևորագույն դեր է խաղացել հայ ազգային ինքնության պահպանման գործում: Հայոց գրերի ստեղծումից հետո երկրում ծավալվում է թարգմանչաց շարժումը, որը լուսավորական-կրթական ընդարձակ ու երկարատև գործունեություն էր: Երկրի բոլոր մասերում հիմնադրվում են հայկական դպրոցներ, կատարվում թարգմանական ծավալուն աշխատանքներ, ստեղծվում է հայ դպրություն, տեղի է ունենում եկեղեցու ու քարոզչության հայացում, հիմնվում են հայ գրչության կենտրոններ ու գրադարաններ: Մերոպ Մաշտոցը Սահակ Պարթևի հետ համատեղ թարգմանել է յուրաքանչյուր քրիստոնիայի համար կարևորագույն գիրքը՝ Աստվածաշունչը:

Մերոպ Մաշտոցը հայ եկեղեցու հոգևոր Հայրերի կողմից դասվել է սրբերի կարգին:

Յուրաքանչյուր քաղաքի փողոցի անվանումն իր մեջ ներառում է պետության և մշակույթի հետ կապված կարևոր տեղեկատվություն: Այն ներկայացնում է քաղաքի և շրջակայքի պատմությունը, տարածաշրջանի բնական-աշխարհագրական պայմանները, կրոնի, հավատքի կամ գաղափարական համոզմունքների, քաղաքային բնակչության սոցիալական առանձնահատկությունների և այլնի մասին: Բացի այդ, դրանք իրենց ներդաշնակ հնչեղությամբ և ամրագրված իմաստով կարող են ազդել քաղաքի հոգևոր մթնոլորտի, ազգաբնակչության հոգևոր-բարոյական վիճակի վրա:

Մերոպ Մաշտոցի անվամբ կոչված պողոտան ներկայումս չի ընդգրկում «սուրբ» ածականը, ինչն անհրաժեշտ է շտկել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ ազգը առաջինն է, որ քրիստոնեությունը ընդունել է որպես պետական կրոն: Աշխարհը մեզ ճանաչում է առաջին հերթին հենց այս հանգամանքից ելնելով: Մենք մշտապես պետք է բարձր պահենք և՛ եկեղեցու դերը հայ հասարակության մեջ, և՛ արժարժեք մեր Սրբերի անունները, այդպիսով նաև կրթելով ապագա սերունդներին, և, ինչո՞ւ չէ, աշխարհին ցույց տանք, որ մեր մշակույթը, պատմությունն ու արժեքներն են բնորոշում մեր ազգային ինքնությունը:

Առաջարկվող այս անվանափոխությունն ունի նաև տուրիստական լուրջ նշանակություն: Աշխարհի բազմաթիվ երկրներում փողոցներն ու հրապարակները,

որոնք կրում են սրբադասված մարդկանց անուններ ունեն հատուկ գրավչություն, ինչպես նաև զբոսաշրջիկների շրջանում առաջացնում են հետաքրքրություն տվյալ երկրի և ժողովրդի նկատմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում եմ Երևանի Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի պողոտան անվանափոխել Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան պողոտա:

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՊՈՂՈՏԱՆ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ
ՄԱՇՏՈՑԻ ՊՈՂՈՏԱ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի Մաշտոցի պողոտան Սուրբ Մեսրոպ Մաշտոցի պողոտա անվանափոխելու մասին» որոշման նախագծի ընդունման դեպքում երևան քաղաքի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՊՈՂՈՏԱՆ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ
ՊՈՂՈՏԱ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ/ԿԱՍ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի Մաշտոցի պողոտան Սուրբ Մեսրոպ Մաշտոցի պողոտա անվանափոխելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ